նամեայ յորելինի նորին. Թ. 1297։

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն լուսանկար Գրիգորի Ե. Բարազեանց ի Տփխիս. Թ. 1306։

— Օրհնութեան յանուն Կոստանդինի Թագոսեան Գրիգորեանց Ալէքսանդրապոլցւոյ. Թ. 1325։

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Վարդան աւագ քհյ.ի Արմաւիր աւանի, յաղագս բազմամեայ ծառայութեանց նորին. Թ. 1410։

Ցաւակցութիւն

Կոնդակ ցաւակցական յանուն Ամենապատրիարքին Կ. Պոլսոյ վասն մահուան Տ. Մարկէն եպս.ի Աշըգեան. Թ. 1281։



ՄՇԱԿՆԵՐԻ ՊԼՏՐԸ ՀՈԳԵՒՈՐ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ։

«Հունձ բազում են, եւ մշակք սակաւ. արդ, աղաչեցէք զտէր հնձոց, զի հանցէ մշակս ի հունձս իւր»։

Մատթ. Թ. 37—38.

Աւետարանի շատ խօսքեր մեր ականջին այնպէս են հնչում, ինչպէս այսօր ասուած լինէին՝ մեր ժամանակի համար։ «Հունձք բազում են և մշակք սակաւ»։ ո՞ւմ միտը չեն գալիս այդ խօսքերը, երբ օրինակ փողոց է ելնում կիւրակէ, ձմեռուայ պարապ մի օր և տեսնում է պատերի տակ նստած շարէ շար մարդիկ անգործութիւնից յօրանջելիս կամ մի տեղ հաւաքուած անվայել սրախօսութիւններ, վէճ ու բամբասանք անելիս, և ոչ ոք նոցանից չի մտածում եկեղեցի գնալ, մանում է եկեղեցի և չի գտնում այնտեղ ոչինչ, որ հոգի բարձրացնէր ու սիրտ կակղացնէր. կարդում են ճշմարտութեան ու յաւիտենական կեանքի աւետարանը, երգում նախնեաց հոգեշունչ երգերը և կատարում սրբազան խորհուրդներ այնպէս, որ իմաստ ու սրբութիւն նոցա մէջ չի մնում և միայն տասնեակ տարիներով վարժուած աչքերն ու ականջները նոցա գայթակղեցուցիչ երևոյթն անուշադիր թողնել և ջերմեռանդ երկիւղածութեամբ նոցա խորքում հոգևոր սնունդ որոնել կարող են։ Որ կողմն և աչք ես դարձնում՝ կրթութիւնից զուրկ, մատաղաշ հասակից արդէն մանկական անմեղութիւնը կորցրած և ստոր հակումներով առաջնորդուող նոր սերունդն ես առնում թէ կոպիտ ժամանակների կոպիտ բարքերի մէջ ծնուած և ծառայական ոգով ու մտայլ նախապաշարումներով սնուած հին սերունդը, կարճամիտ գիւղացուն թէ խորամանդ քաղաքացուն, անուսում գահկին, թէ գահիկ ուսումնականին՝ ամենուրեք ամայութիւն է հոգևոր և բարոյական անկում։ Եւ սակայն որպիսի՞ առատ հունձ երկնքի արքայութեան մշակների համար. քանի՞ քանի պատրաստուած լեզուներ կան և այրուող սրտեր այս անապատում, որոնց եթէ աւետարանական ճշմարտութեան մի կաթիլ ցօղը դիպչէր՝ կբացուէին, կուռճանային, կպտղաբերէին—երևնաւոր, վաթսունաւոր և հարիւրաւոր պտուղ Աստուծոյ արքայութեան շտեմարանների համար։ Ինչո՞ւ պակաս են, չկան մշակներ, որպէս զի հոգիների այս անապատը մշակեն և պատրաստի առատ հունձը շտեմարան ժողովեն. ի՞նչ անենք, որ լինին և բազմանան այդպիսիները։—պատասխանը վերև յառաջ բերած խօսքը տալիս է. աղաչենք հնձի Տիրոջը։ Անգործնական և գլխի տակ կակուղ բարձ դնող մի դարձուած չէ այդ, ինչպէս կթուի գուցէ շատերին, այլ կրկնակի դրական և խնդրի ամբողջ էութիւնը պարզող ճշմարտութիւն է բովանդակում։ Նախ որ՝ հնձի Տէրն ինքը պէտք է մշակներ հանէ. մինչև կոչումն ու ազդումն չլինի ի վերուստ, ամէն մարդկային աշխատանք զուր է։ Իսկական հոգևոր մշակութեան գործն այս աշխարհում պահպանելու և յառաջ վարելու համար. և ապա՝ մենք գործի այսպիսի բնաւորութիւնը լաւ պէտք է ըմբռնենք և բուն աղբիւրին դիմենք, համոզուած միշտ, որ մինչև բուռն կերպով կարիքը չզգանք,

հետամուտ չլինինք և սրտի մտօք աղաչենք լցուցանողին, չեն ելնի մեր միջից վերին կոչումն ընդունելու պատրաստ մարդիկ։

Երբ քրիստոնէութեան տարածման մասին խօսք է լինում՝ մենք սովորաբար հարցնում ենք զարմացմամբ. ինչպէ՞ս մի փոքրիկ խումբ անուսում անզէն, արտաքին ամէն ճոխութիւնից ու կարողութիւնից զուրկ հրեաներ ընդարձակ երկիրներ նուաճեցին յանուն իրենց Տիրոջ։ Պատմութեան անմոռանալի երևոյթներից մէկն է այդ յիրաւի, որի գաղտնիքը մեր սովորական միջոցներով քննել ու պարզել չենք կարող. պէտք է ընդունենք յամենայն դէպս, որ եթէ Քրիստոսի առաքեալներն աւելի զօրեղ գտնուեցան քան նոցա դէմ կռուող աշխարհը, նոցա մէջ երևի մի գաղտնի զօրութիւն կար՝ աւելի կարևոր քան ուսումը, հարստութիւնը, ոյժը, որոնք շրջապատող աշխարհի առաւելութիւնն էին կազմում։ Խնդիրը նորանով չի պարզուի, որ այդ յաղթական զօրութիւնը գաղափար, ճշմարտութիւն, բարոյականութիւն անուանենք՝ հասարակ աշխարհային մտքով. այդ մտքով գաղափարի ու ճշմարտութեան ծառայող, բարոյական գործեր կատարող մարդիկ հրեաների ու հեթանոսների մէջ ևս շատ էին, բայց նոցա պաշտպանած գաղափարներն ու սկզբունքները առաքեալների քարոզութեան առաջ չդիմացան, չնայելով որ արտաքուստ ըստ ամենայնի աւելի նպաստաւոր պայմանների մէջ էին գտնուում։ Առաքեալների մի առաւելութիւնն ևս այն էր հարկաւ, որ նոքա կատարելապէս նուիրուած էին իրենց առաջնորդող գաղափարին, այնպէս նուիրուած, ինչպէս ոչ ոք նոցա հակառակորդներից։ Մենք այժմ դժուար կարող ենք պատկերացնել մարդիկ, որոնք բան ու գործ թողնէին, առանց ռոճկի, առանց որևէ ապահովութեան, սար ու ձոր ընկնէին, գիւղ ու քաղաք պտտէին, ամէն վտանգ ու նեղութիւն յանձն առնէին՝ քարոզելու համար միայն, որ Երուսաղէմում խաչուած Յիսուս մարդկութեան Փրկիչն է։ Այդպէս են եղել Պօղոս, Պետրոս, Յովհաննէս առաքեալները. այդպէս էին անշուշտ նաև Հայաստանի առաջին լուսաւորիչները։ Բայց այդպէս լինելու համար համոզմունքի խիստ մեծ ոյժ է հարկաւոր. հարկաւոր է որ առաջնորդող գաղափարն այնչափ կենդանի, այնչափ իրական լինի մարդու մէջ, որչափ սովորական մահկանացուների մէջ սեփական անձի պահպանութեան զգացումը՝ ուտելու, խմելու, հագնելու պահանջն է կենդանի և իրական. հարկաւոր է վերջապէս, որ Նա կեանք տայ մեզ աւելի գեղեցիկ և կատարեալ կեանք, քան մեր բնական միջոցներով ձեռք բերել կարող ենք։ Եւ ո՞ւր կարելի է այդպիսի բնութիւնից բարձր կեանքի համար հարկաւոր տարրերը գտնել, եթէ ոչ կրկին մի գերբնական աշխարհում, ճշմարիտ կեանքի աղբիւր Աստուծոյ մօտ։ Քրիստոսի առաքեալների մեծարգիւն գործունէութեան գաղտնիքն հենց այդ է. նոքա մեր հողագնդի վերայ շրջելով հանդերձ ապրում էին մի ուրիշ ի վերուստ բերած կեանքով և գիտէին իրենց անձի, իրենց գործի, իրենց խօսքի մէջ այնպէս պայծառ պատկերացնել այդ կեանքի վսեմութիւնը, որ ամէն մի նիւթականից բարձրանալու և վերինն ըմբռնելու ընդունակ հոգի պէտք է ենթարկուէր նորա հրապոյրին, պէտք է ցանկանար վերակենդանութիւն ստանալ այդ նոր կեանքի սկզբունքների համեմատ։ Ուստի այսօր ևս մի ժողովուրդ բարոյապէս բարձրացնել, գաղափարականն ու երկնաւորը՝ քրիստոնէական կեանքի սկզբունքները նորան մատչելի դարձնել ուրիշ կերպ կարելի չէ, բայց եթէ նոցա նման բարոյապէս զօրեղ անձնաւորութիւններ հանդէս բերելով, որոնց մէջ այդ սկզբունքները մարմին և արիւն են դարձել՝ հոգևոր մշակներ, որոնց Երկնաւոր Տէրն Ինքն է ընտրել և ուղարկել Իւր ագարակում աշխատելու, Իւր պատրաստած հունձը ժողովելու։ Եւ որպէս զի նոքա գան ու բազմաթիւ լինին՝ մենք այսօր ևս նոյնը կարող ենք անել միայն, ինչ որ Փրկիչն Իւր առաջին աշակերտներին էր պատուիրում. աղաչել հնձի Տիրոջը։

Մենք յաճախ թերահաւատութեամբ մտածում ենք. եթէ Աստուած տալ կամենայ, առանց մեր աղաչելու էլ կտայ. Յիրաւի շատ բան տալիս է Նա մեզ առանց աղաչելու. ամէն նիւթական բարիք մեր շուրջը առանց մեր կամքի է ստեղծուել և մենք

փայլում ենք չմտածելով Ստեղծողի եւ Նորա ողորմութեան վերայ. Նա երկնքի թռչուններին սնունդ է տալիս եւ դաշտի շուշաններին հագցնում, թափում է Իւր անձրեւը բարիների եւ չարերի համար հաւասարապէս. բայց բարոյական հոգեւոր բարիքը առանց մեր կամքի ստանալ մենք չենք կարող։ Ո՞րտեղից եւ ինչպէ՞ս են նոքա գալիս՝ մենք ի հարկէ մեր բնական խելքով աւելի պակաս չափել կարող ենք. եթէ Ինքը Բարի Աստուածը չշնորհէր չմօտեցնէր մեզ, մեր սիրտն ու հոգին չուղղէր այնպէս, որ տեսնէինք եւ ճանաչէինք նոցա արժէքը՝ մենք ինքներս ամենեւին չէինք որոնի եւ չէինք գտնի. խնդիրն այն է, որ աչքի առաջ տեսնելուց յետոյ իսկ մենք ազատ ենք ընդունել կամ մերժել՝ ենթարկուել նոցա ազդեցութեանը եւ թոյլ տալ, որ ուղղեն մեր ընթացքը դէպի բարին, կամ հակառակել ու թաղուած մնալ մեղքի մէջ։ Մի քրիստոնեայ ժողովուրդ որչափ եւ կորցրած լինի իւր նախնի գաղափարական բնաւորութիւնը, ունի այնուամենայնիւ իւր ներսն այնչափ հոգեւոր տարրեր, որ առիթ չի պակասում նորան երբեմն երկնային արդարութեան հետ երկրաւոր չարիքը համեմատելու եւ մէկի օգնութեամբ միւսի դէմ մաքառել աշխատելու։ Եթէ այդպիսի մաքառում մեր մէջ տեղի չունի, եթէ չարն անարգել արմատներ է ձգում, մենք զգում ենք նորա բռնութեան ուժը, զգում ենք ինչպէս բարոյական կեանքի աղբերը խեղդւում են մեր մէջ եւ փրկութեան ելք չենք գտնում՝ այդ նշանակում է միայն, թէ տարօրինակ յամառութեամբ փրկութիւն որոնել չենք կամենում այնտեղ, ուր պէտք է եւ ուր գտնել կարելի է։ Տարօրինակ է այդ յամառութիւնը, բայց անհասկանալի չէ։ Քրիստոնէական պարտականութիւններից ազատ լինելու համար մարդիկ այժմ մի շատ դիւրին միջոց են գտել. համոզում են իրենց եւ ուրիշներին, թէ այդպիսի պարտականութիւններ չկան, թէ քրիստոնէութեան ժամանակն անցել է, նորա քարոզած սկզբունքները հնացել են եւ ներկայի համար այլեւս արժէք ունենալ չեն կարող։ Իրօք այդպէս մտածել դրդողը շատ դէպքում մեր մարմնական, նիւթական զգացումների այդ պարտականութեանց դէմ ցոյց տուած ըմբոստութիւնն է։ Քրիստոնէութիւնը նեղ եւ անձուկ ճանապարհ է բռնում մեր առաջ, պահանջում է վեր՝ միշտ դէպի վեր մագլցել փշոտ ու տատասկոտ շաւիղներով. իսկ մենք սիրում ենք հեշտն ընտրել եւ կողմնակի ճանապարհներով խոյս տալ պարտականութիւնից, կամ մեր մեղքերի բեռը շալակած դարիվայրն իջնել եւ արագ ու աւելի արագ դէպի վայր գլորուել. մինչ եթէ հոգւոյ բաւականաչափ արիութիւն ունենայինք դէպի վեր դիմելու՝ այդ բեռը հետզհետէ կթեթեւանար, աւելի ու աւելի ազատ կշնչէինք ու աշխոյժ կստանայինք բարձունքին հասնելու։ Հոգւոյ արիութիւնը, բարոյական լրջութիւնը խիստ պակաս է ներկայ սերունդի մէջ, ուստի երբ խնդիրը բարոյական ցաւեր դարմանելուն է գալիս՝ մենք պատրաստ ենք ամէն միջոցի դիմելու, բայց ոչ բարոյականին եւ հոգեւորին։ Հոգեւոր ասպարիզի վերայ մշակներ են պէտք, բայց մենք այդ պէտքը կամ չենք զգում, որովհետեւ մեր ուշադրութիւնը գրաւուած է բոլորովին մարմնաւորով, կամ մտածում ենք աշխարհային կարողութիւններով զինուածների հրաւիրել այդ պէտքը լցուցանելու։ Զարմանալի՞ է ուրեմն, որ հունձը մնում է, աւելանում եւ ոտքի տակ գնում, իսկ մշակներ չկան։ Հունձի Տէրը չի ուղարկում մշակներ, որովհետեւ մենք չենք խնդրում, կամ եթէ խնդրում ենք՝ չարաչար ենք խնդրում։

Պէտք է պարզ լինի մեր մէջ այս գիտակցութիւնը։ Ս. Թադէոս եւ ս. Բարթուղիմէոս առաքեալների հաստատած եկեղեցին նոյն նման առաքելական կոչումն ունեցող պաշտօնեաներ է պահանջում, որպէս զի վերակենդանանայ եւ բարձրացնել կարողանայ մեզ մեր անցեալ դրութիւնից, եւ այդպիսիների գոյութիւնը ներկայում ոչ անժամանակ է եւ ոչ աներեւակայելի։ Առաքելական կոչումը հարկաւ մեր ժամանակ արտաքուստ բոլորովին ուրիշ պահանջներ է դնում, քան նախնի դարերում էր. բայց բուն նպատակին ծառայելու համար նա պէտք է նոյն աղբիւրից եկած լինի եւ նոյն հոգին ունենայ։ Եւ մենք պիտի այդ հոգին ունենանք, պէտք է գոնէ նորա վերանորոգող ու բարձրացնող զօրութիւնը ճանաչենք, որ

իսկական աղբիւրին դիմենք և աղաչենք՝ այդպիսի հոգւով լի մշակներ ուղարկել. բայց չենք ճանաչում և իսկապէս հոգևոր մշակների կարօտ անգամ չենք զգում։ Խօսում ենք յիրաւի շատ նոցա մասին, բայց առանց լրջօրէն մեզ հարց տալու, թէ ինչի՞ համար են և ի՞նչ պաշտօն պէտք է լրացնեն։ Մենք այնչափ նիւթական ու մարմնաւոր ենք դարձել, որ նոցանից սպասած հոգևոր գործը այլևս անհրաժեշտ տարր չէ կազմում մեր կեանքի. չլինի էլ, կարծում ենք, կհաշտւենք։ Եւ սակայն անհրաժեշտ է այն. անհրաժեշտ այնչափ, որ առանց նորա մեր մարմնաւոր բարիքն ևս հաստատութիւն ու տևականութիւն չի ունենայ։ Ժամանակ է, որ զգանք ու հասկանանք այդ, և խնդրենք հնձի Տիրոջը, «զի հանցէ մշակս ի հունձս իւր»։

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ*

«Եկայք երթիցուք մինչև ցԲեթղեհեմ, եւ տեսցուք զբանն զայս որ եղեւ»։

Ղուկ. Բ. 15.

ՍԻՐԵԼԻՔ, եթէ կարծէք, թէ կարճ քարոզը Քրիստոսի ծննդեան տօնին չի պատշաճի, հապա ուրիշ ի՞նչ քարոզ շահաւէտ կարող է դառնալ այս օրուայ համար, քանի որ ոչ մի բառով չի յայտնուի այն սքանչելի մեծութիւնը, թէ Աստուած մարդ դարձաւ և թէ մարդը կարող է աստուածանման դառնալ։ Մի քանի աստուածաբաններ իրանց նեղ հայեացքով մարդեղութեան խորհուրդը կապել են միայն մեղանչութեան կամ պատուիրանազանցութեան հետ։ Բայց աւելի ճիշդ է հին Հայրապետների գաղափարը, որոնք մարմնաւորութիւնը մարդու ստեղծման օրինակ են համարել և այդ բանով բացատրել են համայն գոյութեան խորհուրդը։ Նոքա մարմնաւորութեան մէջ տեսնում էին կենաց, բնութեան և տիեզերքի ահեղ առեղծուածի լուծումը. հաւատոյ աչքով թափանցել են աւելի մեծագոյն խորհուրդների խորութիւնների մէջ, քան ինչ որ նշմարւում է երկրի տղտուկ մակերևութի վերայ. տեսել են յուսոյ կայծեր, որոնք փայլում են մեր պարտականութիւնների և զուարճութիւնների ձանձրալի հանապազորդութեան մէջ։ Այս տեսակէտով հասկանալի է դառնում, թէ երբ մեծամեծ զօրութիւնները միշտ գործում են ունայն և անփառ ձգտումների հետ կից ընդ կից, թէ թշուառ մարդկանց չարչարանքները ներկայացնում են այն կենաց փոքրիկ փլատակներ, որով ապրել է Յիսուս Քրիստոս երկրի վերայ, որպէս աղքատ մարդ։ Մենք իմանում ենք, որ աշխարհի բոլոր անհաւասարութիւնների վերայ, բոլոր սոսկալի ներհակութիւնների վերայ, որով գործւում են յուսահատ ոճիրներ, երևում է Աստուածային փրկագործութեան հետք, այնչափ խոշոր, որչափ երկինքն է, այնչափ պայծառ, որչափ արեգակն է. Այս հայեցուածով Ծննդեան տօնը ուրախութեան հաւաստիք է. անհուն անսահման ուրախութեան առհաւատչեայ է. մենք այժմ ունինք այն մարգարէութեան առումը, որ մի օր լինելի պիտի կատարուի մեր ժամանակաւոր աշխարհից այն կողմում։ Մեր տների զարդարանքը, եկեղեցիների ճրագալոյցը, զանգակների ղօղանջիւնը, տաք ժպտուն դէմքեր, քաղցր աւետիսներ, երգեր, ուրախ խմբեր, տօնական զրոյցներ (երանի թէ այսպիսիների թիւը շատ լինի),—այս ամէնը լոկ թոյլ նշաններ են աւելի խոր խնդութեան, այս ամէնը երկնային հրեշտակների օրհներգութեան լոկ արձագանքներ են, որ հեռուից լսելի են երկրի վերայ, այս ամէնը ծննդեան այն առաջին հոյակապ երեկոյի լոկ ցոլացած ճառագայթներ են, երբ որ երկինքը բացուեցաւ ճշմարիտ լուսոյ ծագման համար։ Փոյթ չէ, գոհ լինինք նաև այդ չափով, գրկաբաց ընդունենք այդ պարգևը, միայն թէ բերէ խաղաղութիւն, յոյս և նոյն իսկ ուրախութիւն վշտացած և թերահաւատ սրտերին։ Տէր Աստծու ճանապարհները այլ են, և բացէիբաց նման չեն մարդկային մոլար ճանապարհներին։ Մարդկային չնչին խորհուրդը կատարւում է թմբկի և փողի ձայնով, մարդու բարկութիւնը արտայայտւում է իւր սաստկութեան համեմատ—երկիրը թնդեցնելով կամ փոթորիկ հանելով։ Իսկ Աստուած գործում է համբերութեամբ, և Իւր ծառաների սիրտը շարժում է մեղմ, քնքոյշ ձայներով։ Մարդկանց աչքում որ և է Տիբերիոս կայսր, Կայափա իւր եփուդով, Պիղատոս իւր ատեանի մէջ—մեծ մարդիկ են։ Աստուծոյ առաջ այդպիսի մարդկային փոքր մեծութեան մանր փառաւորութիւնները՝ ոչինչ բաներ են։ Ամենայն ժամանակների և աշխարհների Տէրը մեզ մօտ իջաւ լռութեան և մթութեան մէջ, որպէս նորածին փոքր մանուկ,

* Ֆառրարի ճառերի մի ժողովածուի (25 ճառ) թարգմանութիւնը պատրաստ է տպագրութեան համար, որոնց մէջն է նաև առաջիկայ ճառը։